ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ

ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«15» հոկտեմբերի 2018 թվականի № 122-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի սեպտեմբերի 28-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ-83 և 2018 թվականի մայիսի 21-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ-1182.1 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԼԼԿ-ի 2018թ. հոկտեմբերի 8-ի թիվ Ֆ-296/18 գրությունը,«Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊ ընկերության 2018թ. մայիսի 11-ի թիվ 119 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Հրազդան Ցեմենտ Քորփորեյշն» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 27.16 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/592 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի կավի հանքավայրը՝ Հրազդանի կավի հանքավայրի 1.X=4482970 Y=84810702.X=4483084 Y=8481090 3.X=4483072 Y=8481118, 4.X=4483108 Y=84812205.X=4483110 Y=84812706.X=4483118 Y=8481302172 7.X=4483130 Y=84813188.X=4483156 Y=8481374 9.X=4483198 Y=848140610.X=4483206 Y=848140011.X=4483230 Y=8481416, 12.X=4483020 Y=8481590, 13.X=4482952 Y=8481526, 14.X=4483054 Y=8481468, 15.X=4482994 Y=8481380, 16.X=4483076 Y=8481334, 17.X=4483022 Y=8481232, 18.X=4483010 Y=8481130 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքներում արդյունահանում կատարելու համար, հատկացնել 497195.0 մ^3 կավի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-592 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4482970

Y=8481070 H=1859.0 h=0, 2.X=4483056 Y=8481068 H=1855.0 h=0, 3.X=4483090 Y=8481072 H=1857.0 h=0, 4.X=4483084 Y=8481090 H=1857.0 h=0, 5.X=4483072 Y=8481118 H=1859.0 h=0, 6.X=4483108 Y=8481220 H=1853.0 h=0, 7.X=4483110 Y=8481270 H=1850.0 h=0, 8.X=4483118 Y=84813022 H=1847.0 h=0, 9.X=4483130 Y=8481318 H=1848.0 h=0, 10.X=4483156 Y=8481374 H=1852.0 h=0, 11.X=4483198 Y=8481406 H=1855.0 h=0, 12.X=4483206 Y=8481400 H=1848.0 h=0, 13.X=4483230 Y=8481416 H=1853.0 h=0, 14.X=4483020 Y=8481590 H=1843.0 h=0, 15.X=4482952 Y=8481526 H=1843.0 h=0, 16.X=4483054 Y=8481468 H=1849.0 h=0, 17.X=4482994 Y=8481380 H=1848.0 h=0, 18.X=4483076 Y=8481334 H=1857.0 h=0, 19.X=4483022 Y=8481232 H=1853.0 h=0, 20.X=4483010 Y=8481130 H=1857.0 h=0, (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 5.3 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 16670.0մ³ կավ:

3.Կնքել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-592 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի կավի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ-592 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5)ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը, Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

10/15/2018

X

VERIFIED OCSP 15-Oct-18 21:17:06 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ